

# ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցե՝  
Rédaction du journal  
VERADZNOUITION  
ROUSTCHOUK (Bulgarie)

ՉԱՐԱԹԱԹԵՐԹ  
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ  
Տարեյակն 10 Շրակի, Վեցսուսայ 5 Շրակի.

Գրադրությունները ևս յեկ դասմանիս.  
Ծանոցումի տողը՝ 20 սանթիմ.

## ՄԻԱԿ ՈՒՂԻ

Աւելի և աւելի՝ սօցիալիզմը մեզանում սկսել է արձակել իր արմատները։ Իբրև միակ լուծում մըն մեր քաղաքական ու սօցիալ-տնտեսական խնդիրների, այսինքն ա՛յն խնդիրների, որոնք իրանց մէջ կրում են նաև ազգային դատի լուծումը, սօցիալիզմը գրաւում է հայ մտածող խելքերը։ Տարակուս չը կայ — և վերջին տասն և հինգ տարւայ ընթացքում եղած են բանակաւ ներ այդ առիթով — տարակուս չը կայ, որ սօցիալիստական շարժման և գործաւորների դասակարգային կազմակերպման համար մեզանում ունենք արդէն հող ու տարրեր։ Ինդուստրիական արդիւնաբերութեան շարունակական արագ ընթաց վարդապետը կողմանեան կենտրոններում, որպէս և մասամբ թիւրքիսում, ուր բաւական մեծածիւր են հայ բանւորները, աւելի և աւելի ստեղծում ու ծաւալում է այն պատմական սօցիալ-տնտեսական պայմանները, որոնց շրջանակում, նոյնպէս պատմականօրէն, կարող է և կոչւած է վարդանալու և ծաւալ ստանալու հայ բանւորական, հայ սօցիալիստական շարժումը։

Մեր մարդկային, որպէս և ազգային զարգացումը պէտք է ընթանայ և չէ կարող չընթանալ այն միակ ուղիով, ինչ ուղի գծագրում է ներկայ հասարակական-տնտեսական կազմը բոլոր առաջադիմող ազգերի նկատմամբ ևս։ Ուր կոխելով տնտեսական և ինդուստրիական զարգացման այն պիսի նոր շրջան և կառավարելով այնպիսի պայմաններով ու ձևերով, որպիսիներն այսօր իրանց օղակում ամփոփում են քաղաքակիրթ ազգերի հանրակենցաղը, հայ ազգն էլ սկսում է գտնել մի և նոյն հողի վրայ, մի և նոյն սօցիալական օրէնքների տիրապետութեան տակ, ինչ որ և առաջինները, դասակարգային մի և նոյն յարաբերութիւնների մէջ — թէկուզ գեռ շատ աւելի նապաստիճանով, — ինչ որ և առաջինները, և, ուրեմն, նրա ծոցում կազմում է նոյն հակառակ դրու-

թիւնը երկու դասակարգի մէջ՝ կապիտալիստ ու պրօլետարի, բուրժուա ու գործաւոր, ուստի և որոշ տեսակի սօցիալ-տնտեսական կուլ այդ երկուսի մէջ։

Պատմական որոշ ժամանակի հէնց ա՛յդ հակառակ դրութիւնից է առաջացած տնտեսական որոշ պայմաններից, — որ ծնունդ է առել սօցիալիզմը՝ իբրև արտայտիչ բանւոր դասակարգի պատմական ձգտումների, և սօցիալիստական շարժումն իբրև նայն դասակարգի գործունէութեան տանող դէպի նրա ձգտումների իրագործումը՝ նախ յաջորդական կերպով և ապա իրանց ամբողջութեամբ։

Այդ ձգտումները պայմանաւորում են մարդկութեան հանրակենցաղի մէկ աւելի ընդարձակ զարգացում, նրա առաջադիմութեան մէկ աւելի բարձր աստիճան քան այժմ, և բանում են ազատ ճանապարհ նրա անվախճան առաջխաղաց ընթացքի համար։ Այդ ձգտումներն իրանց մէջ կըրում են այն բոլոր պայմանները, որոնք մարդկութեան հանրակենցաղի կը հիմնեն բարօրութեան, հաւասարութեան ու գիտակցականութեան անխախտ հիմունքների վրայ։ մարդկային խմբերին, որպէս և անհատներին կօժտեն նիւթական պահանջների բարձր ու հաւասարաչափ բարեկեց պայմաններով գրանով, ուրեմն, կը հանդիսանան նոյնպէս պայման նրանց կենսական, մտաւոր ու բարոյական ազատ և անվախճան զարգացման։

Դա՛ է մարդկային հանրակենցաղի ու գոյութեան այն վսեմ իդէալը, որ քաղաքակիրթ մարդկութեան տնտեսական զարգացման որոշ աստիճանի վրայ, ստեղծել է մարդկութեան ամենատնտրագրեալ դասակարգի պատմական ձգտումների զօրութեամբ, մէկ իդէալ, որին մարդկային ամենայնողութիւն մտքերն անգամ չէին կարող հասնել առաջ, այսինքն մինչև որ, շնորհով հանրակենցաղի յայտնի գրութեան, չը գոյացաւ գործաւոր դասակարգը։ Այդ դասակարգն աշխատաւորի շապկի ծալքերում կրում է մարդկային ամենաբարձր իդէ-

ալը, ճշմարտութիւն և արդարութիւն փնտռող ազատ ու համարձակ մտքերի ամենասուրբ երազը։

Ահա դէպի նոյն այդ իդէալն է, որ այսօր բացել է նոր ուղի հայութեան առաջ ևս։ Տնտեսական նորակերպ պայմանները ըստեղծելով մեզանում պրօլետարի դասակարգ, միաժամանակ ստեղծում է ձգտումներ դէպի այն իդէալը։ Դրան, հետ միասին և գրանց իսկ զօրութեամբ, այն պայմանները ստեղծում են միանգամայն և մի նոր ու մեծ պահանջ, որն իրա կողմից պայմանաւորում է իդէալի յաղթութիւնը, հարթում է այն ուղին, որը պէտք է տանէ դէպի իդէալի իրականացումը։ Այդ պահանջն է՝ սօցիալիստական գործունէութիւնը, գործաւորների դասակարգային ինքնագիտակցութիւնն ու կազմակերպումը։

Այդ հանդիսանալով իբրև հայ յեղափոխական նոր գործունէութիւն, ա՛յդ ինքնով ներկայումս պատմական պահանջ հայութեան համար թէ՛ նրա մարդկային և թէ՛ ազգային դատի տեսակետից, պարզ է, որ հայ յեղափոխական կենդանի ոյժերն աւելի և աւելի կանցնեն կալմակերպել սկսող բանւոր դասակարգի գործունէութեան ասպարէզը։ Դրան զարմանալի կերպով նպաստել կարող է այն վերին աստիճանի ուշագրաւ հանգամանքը, որ մեր յեղափոխական կուսակցութիւնների ոյժերի ամենասուրբ մասը եղել է աշխատաւոր դասակարգից, ուրեմն հէնց նոյն այն հասարակական տարրից, որ իր տնտեսական դրութեամբ արդէն կոչւած է, ինքնագիտակցութիւնն աւելի և աւելի զարգանալով, ուշ կամ վաղ ընդգրկելու իր դասակարգային սօցիալական գործը։ Հայ կապիտալիզմի անընդհատ զարգացումը՝ մի կողմից, հայ բանւոր դասակարգի հասարակական դրութեան աւելի և աւելի որոշւելն այլ դասակարգերից և նրա ինքնագործունէութիւնը, որ ու զարթութիւնը՝ միև կողմից, իբրև այդ պատմական ըթնացքն ու զօրութիւնն օրից օր աւելի կընդարձակեն բանւոր դասակարգի գոր-

ծունէութեան ասպարէզը, դարձնելով նրան այնպիսի լայնածաւալ աւազան, ուր կը գանձ կը թափւեն կողմնակի հոսանքների շրերը։ Այդ դէպքում ներկայումս գոյութիւն ունեցող հայ յեղափոխական կուսակցութիւնները — մեր խօսքը Հնչակեան կուսակցութեան մասին չէ, որ արդէն սօցիալիստական է ծրագրով, և ուրեմն կոչւած է միայն ճշգորէն գործադրելու այդ ծրագրի սօցիալիստական բաժնի գծագրած գործունէութիւնը, միանգամայն դրա ոգու համաձայն վերաքննելով իր Ծրագրի միւս բաժինները, — ներկայումս գոյութիւն ունեցող հայ յեղափոխական կուսակցութիւնները, ասում ենք, դէմ առ դէմ կանգնելով բանւորների դասակարգային գործունէութեան հարկադրւած կը լինեն որոշել իրանց դիրքը և ուղղութիւնը։ Եթէ նրանք բռնելու լինեն ըմբոստ դիրք դէպի այդ նոր գործունէութիւնը, դրանով իրանք իրանց կը դատապարտեն մահացման և և կամ, բարեպատեհ պարագային բոլորովին կը կաշկանդեն իրանց գործունէութիւնը զուտ ազգայնական ձգտումների օղակում։ Այս վերջին դէպքում նրանք կարող են իսկ հանդիսանալ գործոր հակառակորդ սօցիալիստական կուս. գործունէութիւն և տարրալուծել բուրժուական կուսակցութիւնների շրջանակում։ Այդ րօպէից նրանք կը դառնան բացարձակ թշնամի հայ բանւոր դասակարգի և մեզ, սօցիալիստներին։

Այս կամ այն կերպ, հարցն ըստ ինքեան ներկայումս է իրա պատմական ձևի տակ և իրական հողի վրայ։ Հայութեան, իբրև քաղաքակիրթ մարդկութեան մի մասի, նոյնպէս և մի որոշ ազգային համախմբման, տաղնապալի և օրհասական խնդիրների լուծման համար կայ մի միակ ուղի — սօցիալիզմը։ Պատմական ու կենսական ներկայ պայմաններում իրա սօցիալ-տնտեսական, ուրեմն և քաղաքական, պահանջների իրականացման հասնելու համար աստիճանաբար և շարունակ գործելով՝ ձգտելու դէպի ազատութիւն, դէպի զարգացումն, լիակողմանի ու կատարեալ, և դէպի ընդհանուր բարեկեցութիւն՝ հայութեան առաջ կայ մի միակ ուղի — սօցիալիստական գործունէութիւնը։

Եւ դա կը լինի հայ բանւոր դասակարգի գործը։

Մ Ի Հ Զ Օ Ր Զ Ա Յ Ն

(շարունակութիւն եւ վերջ)



Այսպէս ներսէս Պատրիարքը 1878 թ. այստեղ Բեռլին կայաքաղաքում վեհաժողովին պատուիրակ ուղարկեց: Նա յաջողութիւն ունեցաւ, յաջողեցրեց 61-րդ յօդուածը<sup>\*)</sup>, որ թուում էր թէ, Հայաստանի ապագան կապահովեցնէ, այս յօդուածը, որի վրայ պիտի յենուի զեռ աշոտ էլ Հայերի իւրաքանչիւր մի բարեկամ: Թուում էր թէ Եւրոպան հովանաւորում է ճնշուած ժողովուրդին:

Աւա՞ղ: Պետութիւններն իրենց շահերն աչքի առաջ ունենալով լուրջ չէին ընդունել այս բանը: Եւ հէնց այս հանգամանքը, որ Հայերը համարձակուել էին ճաճկաստանի դէմ Եւրոպային բողոքել՝ ամենաբուռն կերպով բորբոքեց տաճիկ կառավարութեան կատաղութիւնը նրանց դէմ:

Կ. Պոլսի Հայոց թատրոնը փակուեց, Հայոց պատմութեան դասաւանդութիւնը, Տօները, դասախօսութիւնները ևն. արգելուեցան: Մամուլն ամենախիստ գրաքննութեան ենթարկուեց:

Բանտարկութիւնները և հարձանքները սկսեցին յաճախ կատարուել, քան թէ սկզբներում: Անխիղճ և անխնայ եղան Տաճիկները: Քիւրդերին կազմակերպեցին Հայոց դէմ իրեն հեծն լազը՝ զեր՝ Համիդիէ անունով: Սուլթանը այս անկանոն զօրքին իւր անունը տուեց և բաց թողեց գլխաւոր հարեաններ Վրայ, նրանց կողպակուելու և ջարդելու, կոտորելու համար:

Եւ որովհետեւ Հայերն սկսեցին շատ անդերում աւազակային խաժամու ժներ զէ՛մ՝ պաշտպանուել, ուստի պատրուակը պատրաստ էր, որպէսզի խմբական կոտորածներով և խմբական կոտորածներով այս անհատ, այսինքն քրիստոնեայ ժողովուրդին ոչնչացնեն, բնաջինջ անեն:

Բեռլինի վեհաժողովում Օսմանեան կառավարութիւնը 61-րդ յօդուածով պարտաւորուեց հարկաւոր ռեճիմենտը մայցել, Հայերի ապահովութիւնը Քիւրդերի և Չերքէզների յարձակումների դէմ երաշխաւորել և պետութիւնների դրա մասին ժամանակ առ ժամանակ հաշիւ տալ: Դաշնագիրն ստորագրող պետութիւններին արտառութիւն էր տուած, Տաճկաց գործ դրած միջոցների վրայ հրակելու:

Տասն և հինգ տարի շարունակ Տաճկաստանը պետութիւններին դատարկ խօսքերով կերակրեց:

\*) Թէեւ անթիւ ջանքեր է գործ դրել մեծանուն Պատրիարքը 61-րդ յօդուածի եւ Հայկական խնդրի նկատմամբ, սակայն դոյն այդ յօդուածը ծագեց եւ յաջողեց չնորհիւ անդլիական դիպլոմատիայի, հակակշիւ կազմելով Ռուսաստանին: Ծ. Թ.

Եւ եթէ ապա չսկսեց ռէֆորմներ—բարենորոգումներ մոցնել, այլ ընդհակառակն աւելի ևս խրախուսուեց, անդ իական, ռուսական և ֆրանսիական զեպանուութիւնների խոտազոյն պահանջագրերին խմբական արեւնահզ կոտորածներով պատասխանելով, այս բանի համար համարձակութիւն ստացաւ միայն—ինչպէս որ խոստովանում է այնպիսի եռանդալից գերմանական հայրենասէր, որպիսին է շատ լաւ տեղեկութիւններ ունեցող ճանապարհորդ Paul Rohrbach—որովհետեւ ճաճկաստանի հրաշալի յարաբերութիւնները՝ դէպի Գերմանիան կարելի դարձրին այս բանը: \*)

Պետութիւնների միահամուռ միջամտութեան ժամանակ Տաճկաստանը յետ կը կենար: Նա բոլոր կողմերից շրջափակուած կը լինէր: Գերմանիայի բարեկամական յարաբերութիւնը նրան ազատ շունչ տուեց: Այն շրջափակումը, որին նա իրեն ենթարկուած տեսաւ, իսկական չէր:

Նա դուրս սողոսկաց և կարողացաւ, առանց արգելքի, սուրբներով ու նիպակներով, սուր սուսերներով և կարմրաշեկ երկաթներով, բռնաբարութիւններով և հրով Հայերին լռեցնել:

Ոչ ոք չէր կարող ուրանալ, որ մասնաւոր Գերմանացիներ, որպէս կանայք, նոյնպէս և աղամարդիկ, ամենալատ սարսափների ժամանակից յետոյ օգնութեան ձեռք կարկառեցին: Որքանոցները կը թակահար հաստատութիւնները Գերմանական զօհարբութեամբ են հաստատուել: Ամեն ոք գիտէ նաև Eduard Bernstein-ի ճառը, և ամեն ոք գիտէ թէ՛ Լէպիուսի պէս մարդը, —որը գրաւ համար բաւականին պատիժ է կրել— ամեն հնար գործ դրեց, իրերի իսկական գրութիւնը Հայաստանի մասին իւր հայրենակիցներին առաջ պարզելու:

Այնուամենայնիւ արւանջ սրբասցիկ յարաբերութեան գերմանական պետութեան և Տաճկական խաբիւնէի միջև չէր կարող սեղի ունենալ ամենաքիտ հրապարակական եղեղնը՝ դարեւից ի վեր: Ուստի արժէ՛ ամենից առաջ Գերմանիայում, Հայերի համար տրամագրութիւն ստեղծել:

Հին Իսլանտական ամենանշանաւոր հեքիաթում մի կին իւր սպաննուած ամուսնու արինահոս վերարկուն մի ազգականի վրայ է նետում, — որ իւր կողմը բռնանելու այնքան էլ հակում չունի — որպէսզի դրանով նրան ստիպէ, սպանուածի վրէժը լուծելու:

Վրէժի մասին այս տեղ ոչ ոք չէ մտածում: Բայց եթէ կարելի լինէր, հայ զօհերի թափուած արիւնից բորբոքվին թանձրացած վերարկուն Գերմանական ժողովուրդի մասին այս տեղ ոչ ոք չէ մտածում: Բայց եթէ կարելի լինէր, հայ զօհերի թափուած արիւնից չէ կախուած, որ ոչ մի հանգամանք նրան չէր կարող դէպի վճռաւորութիւն դրդել մեր խնդրի նկատմամբ, թէկուզ անմասն հերոսութիւններ էլ ցոյց տուած լինէինք, դրան թող պերճախօս ապացոյց ծառայէ մեր

\*) Paul Rohrbach կողմակից մինչև Միջերկրական ծովը, էջ 160:

վրդի ուսերին ձգել, նրան դըրգելու, որպէսզի նա հին փառաւոր ցեղի մնացորդների համար Գերմանական կառավարութիւնից ապահովութիւն և ապաստութիւն պահանջէ—այս կը լինէր մի օգտակար Գործ:

Սրանով վերջանում է խիզախ Գանիացու և աշխարհահռչակ արմատական քննադատի ճառը Գերմանական և Ռուսական պետութիւնների ոճրագործ խրախուսանքի զոհ դարձած Հայ ժողովուրդի մասին: Բայրոյական մեծ ուժի և կամքի տէր, ասածների ճշմարտութեան կատարելագոյն համոզուած պիտի լինել օտար պետութեան մայրաքաղաքում, նոյն պետութեան ռամիւսագէտ արքայապետի քթի տակին՝ քիչ վերեւ ընդդէմ խօսքերն ստելու ժամանակ: Այո՛, դարերից ի վեր չտեսնուած, շլուած ամենաբարձր հրապարակական եղեւնը կատարուեց շնորհով Գերմանական պետութեան և Արգել—Համիդի սիրալիր յարաբերութեան... Ոճիրներ և եղեւներ դեռ ծրագրում է, ըստարհատի, նոյն ոճրագործը: Գերմանացոյ ժողովուրդը, յարգելի ճառախօսի ասածի պէս, ի հարկէ վրէժի մասին հիւսք չունի մտածելու, բայց կայ մէկը, որ եթէ վրէժի մասին չմտածէ գէթ իւր գոյութեան մասին պիտի մըտածէ... և այդ մտածողը բըռնաւոր սրից զերծ մնացած ժողովուրդը պիտի լինի յիւսկ—կոփող սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու համար:

Լոնդոն Ս. Տաշիր

25 ՏԱՐԻ ԱՌ ԱԶ ԵՒ ԱՅԺՄ (1878 թ. 13 Յուլ. — 1903 թ. 13 Յուլ.) (Շար. նախ. թիւն եւ վերջ)

Վան, նոյն իսկ մեր մէջ, այն պիտի մտածողներ, որոնք, կարծես ի պաշտպանութիւն Եւրոպայի մեռելային անտարբերութեան, առարկում են, որ ինքը՝ Հայը, հրապարակով ցոյց չտուեց մի անգամ, թէ իսկապէս արժանի է ինքնակախ ազատութեան. նրա մէջ քնած է յեղափոխութիւնը, մանաւանդ գործնական կեանքում: Հայաստանում չիայլեց սուր ու սուսեր ու յիշի թափով. որտեղն ըստու կարել, մարտիրոսութիւնը բացակայում էր, որպէսզի միանգամից իրեն դրաւ էր Եւրոպ. դիպլոմատիայի ու շաղթութիւնը և լուրջ կերպով մտածել տար իր մասին: Այսպէս և այլ առարկութիւններ: Թէ իսկապէս մեր մէջ յեղափոխական ոյժը շատ ակարէ, սահմանափակ շրջանների մէջ պարփակուած, անժողովրդական, սեփականութիւն հայ երիտասարդութեան ցաւ է խոստովանել, միայն մի աննշան սովորի, դա մի անհերքելի և խիստ գառն իւրողութիւն է: Բայց սր մեր առնալու թիւնը Եւրոպայի միջնորդութիւնից չէ կախուած, որ ոչ մի հանգամանք նրան չէր կարող դէպի վճռաւորութիւն դրդել մեր խնդրի նկատմամբ, թէկուզ անմասն հերոսութիւններ էլ ցոյց տուած լինէինք, դրան թող պերճախօս ապացոյց ծառայէ մեր

բաղդակից նահատակ Մակեդոնան: Պակաս էր որտեղն նրա միջած կռուի ահարկու շաշիւնը, քիչ չըբարեց Եւրոպական մամուլն ու գիւտնագիտութիւնը այդ մատրոս ժողովրդի խնդրով: Սակայն ինչ վճռական քայլ արաւ Եւրոպան: Ինչ արաւ ամենից առաջ Մակեդոնիայի զեղակից ու դարձնակից միահեծան ծարրնա, որ ուժի ուս մուծիկի արիւնը խնայելու անգամ տրամագրութիւն ցոյց տուաւ ի նպաստ մի մորթուող ժողովուրդի: Դա մի սառը ջուր էր, որ ի վարման աշխարհէ, ոչ ի սոսիային Արշապուրդից Մակեդոնիայի կարմիր լաշեկ երեսին: Անմիտ կը լինէր մէկը, եթէ կարծէր, որ վերջը սաւստո — ռուսական առաջադրաց քայլը և նրանց ձեւակերպած բէթօմներ ծրագրելը՝ յօդուտ Մակեդոնիայի, որեւէ լուրջ բնաւորութիւն ունէր, Հասարակ մահրութիւն անգամ, դիտելով թիւրք. քիւրդի քաղաքական սուլիսիլան, ամբողջ 25 տարուայ անհամար խաբէրայտրիքները, անկարող էր հաստատ, որ առանց լուրջ կօնտրոլի, Թիւրքիան երբեկեց բարեւորութիւն կուենայ: Ուրեմն ո՛ր մնաց, որ աւստրո—ռուսական զիպլոմատիան այդքան նայի հուսառունկնար և չմանաչէր Թիւրքիայի քաղաքականութեան հողբանութիւնը: Նրանց քայլը միայն մի պլանստիական ցաւակցութիւն էր տարբեր կարգի, ուրիշ ոչինչ:

Մէջ, ապարդիւն են բոլոր յոյս ու ակնկալութիւններ Եւրոպական գիւտնագիտութիւնից: Ապարդիւն են նաև—գոնէ գործնական տեսակետից — այն բոլոր ծիգ ու ջանքերը, որ Եւրոպայում համախմբուած ուսանողութիւնս չի խընայում ժողովրդի խաւքում մարդասիրական զգացմունքներ, համակրանք վաստակելու, յօդուտ հայկական հարցին: Պարեւելան հարցը և նրա մի օղակը կազմող ոչակական հարցը ոչուտ փառաբանական քննադատութիւն ունի և պիտի լուծուի միայն քաղաքական ճանապարհով: Իսկ քաղաքականութեան յիկը ժողովուրդի, մաքուր զպացմունքների տէր մասնայի ձեռքում չէ, այլ հեռաւոր վայրերում քաղաքական—տնտես. շահեր որոնող տարրերի—կառնարարութեան, բիսոփրասիայի և կապիտալիստի— ձեռքում: Թո՛ղ մեզ համար միանգամ ընդ միշտ պարզ ճշմարտութիւն դառնայ, որ ներկայ ընթացքով, անկարելի է երկուսիցէ հարստական միջոցները սպասել պետութիւնների կողմից այն վայրում, ուր նրանք իրար շահեր փոխադարձաբար յարգելով հանդերձ, անզօր են միևնոյն ժամանակ իրենց ինտերեսները չջօղափող խնդիրներին նկատմամբ: Վճռական քայլ առնելու ջօրեց պետութիւնների շահարդիւն հնոն բնոնքերը իրարու դէմ են ելնում Թիւրքիայում այնպիսի մեծ թափով, որ հազիւ թէ նըրանցից մէկին ու մէկը առանձնապէս մի նշանաւոր խնդրի լուծուելու քաջութիւն ունենալու Եւրոպ. դիպլոմատիա ու կապիտալիստ Թիւրքիայում գործ դրած իրենց քաղաքական ու ֆինանսական ջանքերի համար փառաւոր կերպով վարձատրում են կամ վարձատրուելու գեղեցիկ, ապահով յոյսեր ունեն մօտիկ ապագայում: Եթէ այս այսպէս է, ինչ ու ուրեմն

նրանք օսմաննան կառավարու-  
թեան քննարկ հանդիսանան, ընդ-  
դէմ գնան նրա քաղաքական շա-  
հերին որևէ միջանկեակ խնդրի  
համար: Ինչու ուրեմն, ասում  
ենք, «Մեծ մարդասպանը» ասու-  
թանքը, դրոշմ իւր արիւնքի կո-  
տորածներէ համար, երբ նա մի  
անգամ ընդ միշտ լաւ է ըմբու-  
նել Եւրոպ. պետութիւններէ հա-  
ւաքական միջամտութեան անա-  
կան ընթացքը, անվիաս աստիու-  
թիւնը: Եւրոպ. դիպլոմատիան—  
ինք կասկածում պնդելու — եր-  
բէք վճռական քայլ չէ անելու,  
չուտափոյթ բէֆորմներ չէ պա-  
հանջելու, գոնէ մինչև այն ժա-  
մանակ, որքան նա պատրաստ  
կուներու և ակցիոներակալն երաշ-  
խաւորութեամբ շարժապուած է  
Թիւրքիայի հետ: Մնում է մեր  
կարծիքով երկու միջոց, վերջ  
տալու այդ յարաճուն խաւար  
կեանքին. զա պէտք է լինի  
կամ զուտ քաղաքական զօրեղ և  
ընդհանուր յեղաշրջում, իբրև մի  
բնական հետեանք այսօրուայ դժ-  
բաղտ կեանքի, աւերակ վիճակի,  
կամ թէ չէ վաղ թէ ուշ Թիւր-  
քիան ես պիտի ճարտար գառնա:  
Եւրոպական կեանքը հոտհոտող  
այն ստուսակալն շարժան, որը  
մարդկային ընկերութեան մի նոր  
ու իրարակալն ղեկի վերաստեղ-  
ծելու աւետ է բերում: — Դա մի-  
շաղկապին սօցիալիզմն է իւր յե-  
ղափոխիչ գոյններով:

Կայացիւք B. I. Bolt

որ հետեւին իրենց: Երկու օրուայ  
մէջ հոսանքը ընդհանուր դարձաւ  
որը արդէն դադարած գտաւ բո-  
լորը, նախահանք, գործարան, ար-  
հեստանոց, երկաթուղի, շոգենաւ,  
քարշակ, նոյնիսկ փոքրիկ դեր-  
ձակներ փոքրիկ արհեստանոց-  
ները: Բանւորները աղաւ հա-  
մարձակ շրջում էին փոքրոցներու՝  
իրենց յետեւի փակած խանութ-  
ներ, արհեստանոցներ թողնելով:  
Այսօր հզօրը բանւորի ձայնն է:  
Նրա այսին այդ է. ոչը ոչ: Եւ  
այդ բոլորը 1-ձ օրուայ մէջ: Սա-  
կայն ի՛նչ են պահանջում նրանք:  
Նրանք պահանջում են, աւելա-  
ցում օրավարձի, զէպի իրենց  
քաղաքավարի, մարդավայել վե-  
րաբերունք, սենեակներ բոլորի  
համար, սառ և մաքուր ջուր և  
մի քանի տեղեր էլ արտաքսել  
գործից կառավարչի և այլն:  
Նոյն պահանջներն են բոլոր գոր-  
ծարաններում, անչափ զանա-  
զանութեամբ միայն:

Գործադուլի մասնակցում են՝  
Հայ, Ռուս, Վրացի, բանւորները:  
Նոյնիսկ, որը շատ ուրախակի և  
րեւոյթ է, Լէզգի և Պարսիկ (հէմ-  
չէրի) աչի տաւորները ենթար-  
կուել են ընդհանուր հոսանքին  
և հաստ-հաստ փայտերը ձեռքե-  
րին վազում էին այս այն կողմ ու  
ստիպում գաղաթել աշխատելուց:

Ձեր հայեացքը դարձէք զէ-  
պի յայտնի ամարանոցներն ու  
հանքային շրջեր: Այնտեղ հա-  
րուստը քսակը լի ոսկով իր  
կեանքը անց է կանցնում զեղ օր-  
գիտանքում), շրջապատում «Հիւ-  
րի-Քերի» անուամբ: Նայեցէք նրանց  
փրած երեսին, արնակալած վա-  
ւաշտ աչքերին, նրանց հաստ  
փորին: Նա անհոգ է: Նրա գոր-  
ծերը կառավարողներ կան շատ:  
Իսկ այստեղ սև կեանք վարող  
«ժայր-ժայրի» հազիւ հասցնող  
բանւորը ոտի է կանգնած:

Սարսափած այդ անակնկալ  
երևոյթից, կապիտալիստները ըս-  
կըրում դիմեցին կառավարութ.  
ապա մի քանիսը նրանցից բանւոր-  
ներին պահանջներին բաւարարու-  
թիւն տալով, համոզեցին աշխա-  
տել: Վերջիններս, սակայն, հաս-  
կացնել տուին նրանց, որ մի քան-  
կիսի գրութեան սրտը բարեկա-  
ւումը չէ՛, որ ստիպում է իրենց  
չաշխատել: Աւ այժմ նրանք,  
գործարանատէրերը իրենց ուրիշ  
գիրք են տուել, կարծես ասում  
լինեն՝ «բոլորիդ կը հեռացնենք  
գործիցու կը վարձենք նրանց,  
որոնք կուզեն մեր պայմանների  
մէջ աշխատել»: Սակայն դա կա-  
տարեալ ինքնախաբէութիւն է:  
Այդպիսի բան բոլորովին չի կա-  
րող լինել ներկայ րոպէում:

Ժողով-ժողովի յետեւից են ա-  
նում, իրար գզում են, քաջախ-  
րում, կըշտամբում, կառավարու-  
թիւնից օգնութիւն խնդրում ի-  
րենց ահագին փաստերը սեղանի  
վրայ դնելով:

Իսկ կառավարութիւնը զօրք է  
կանչել և մինչ օրս էլ վճռական  
միջոցներ չէ գիտել՝ բանւոր-  
ներին աշխատել ստիպելու վերա-  
բերմամբ, չնայած, որ իւր եր-  
կաթուղին, տէպօն, շոգենաւերը  
գաղաթած են: Արդե՞օք երկրորդ  
Քիչնէ չի լինի Բագուն իւր հա-  
յերով:

Բանւորները վճռել են չաշխա-  
տել մինչ իրենց բոլոր պահանջ-  
ներին բաւարարութիւն տալը:  
Կարծես նրանց դիպիզն է ունէկը  
ամենի համար, ամենքը մէկիս-  
ել եթէ դա երկար տէէ, եթէ  
կազմակերպութեան մէջ, շնոր-  
հով բազմաթիւ այդ ահագին բազ-  
մութեան, անհամաձայնութիւն-  
ներ ու փոխադարձ ատելութիւն-  
ներ չըծագին:

Իսկ գործարանատէրերը և կա-  
ռավարութիւնը չեն կարող չը կա-  
տարել բանւորներին պահանջները  
նախ աչքի առաջ ունենալով այն  
հանգամանքը, որ իրենք երկուսն  
էլ բացարձակապէս զգալի վնաս-  
ներ ին են ենթարկուում, երկրորդ  
որ գործադուլին կարող են սուր  
կերպարանք տալ, որից, եթէ եր-  
կար տէէ, շնորհով հակադրական մե-  
ծամասնութեան քաղցածութեան,  
կարող է բանկերի և շքեղ խա-  
նութիւնների կողպուտ և ծագել:

Եւ Միւսթան գործող աշխատա-  
ւոր ահագին բազմութիւնը մի-  
այն ընդունակ է հասցնել իւր  
հարածը իրեն արիւնը ծծող վամ-  
պիրներին և դրանց հովանաւորող  
Յարի արդէն լրբացած կառավա-  
րութեանը: Նա իւր այդ յաղ-  
թանակով կարագացնէ անկումը  
անարգ բռնութեան և կապացու-  
ցէ, որ միշտ կը յաղթանակէ բան-  
ւոր գիտակից իր շահերի և ի-  
րաւունքների դասակարգը: Այս  
հրապարակային ցոյցով նա, ան-  
չուշտ, կը լինի այն, ինչի մասին  
խօսեց թղթակցութեան սկզբ-  
բում:

Այդ գործադուլով սօցիալ-դե-  
մոկրատիական բանւորական կու-  
սակցութիւնը իւր արժանի ապ-  
տակը արդէն տեսց Վէլիչկօ և ընկ-  
անամօթ երեսին, որը ամեն կերպ  
աշխատել է և աշխատում է տակա-  
ւին կովկասի ցեղերի մէջ ստե-  
լութիւն սերմանել և այդպիսով  
դողացնել նրանց միաբան, թէև  
առ այժմ թոյլ, ոյժերը, որոնք  
վաղթէ ուշ պիտի ամրապնդեն և  
գործադուլներ ընդհանուր թշնամու՝  
Մարի կառավարութեան, նրա ան-  
ձարձակութեան դէմ:

Ժամանակը, իրերը իրենցը  
անելու են՝ աջուձախ, եթէ չասեմ  
տապալելով, կընեն լով, գոնէ կա-  
րելի ասել, թուրացնելով թէ ան-  
հատներին և թէ յեղ. կուսակ-  
ցութիւններին նոյն իսկ, որոնք  
համարձակութիւն կուենան մի  
քնակալն հոտսնի, շարժան, ա-  
ռաջն ասել, իրենց թոյլ կուրծ-  
քերը գէմ տալով նրանց կընե-  
լու կամ տապալելու յոյսով:

Եւ հասարակական գործիչ-  
ները ու կուսակցութեան սրբազան

պարտականութիւնը պիտի լինի,  
նրանք ընդունակ պիտի լինեն,  
ամեն մի տեսակ բարեյաջող հան-  
գամանքներէ օգտուելու՝ իրենց  
նպատակներին հասնելու համար՝  
ուղղակի կամ անուղղակի կեր-  
պով:

Անիխան

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՍՄԱԿԱՆԻ  
2.

Հումայ Պապը՝ Լեոն ԺԳ՝ ըսել  
ևս դադարեց կաթոլիկ աշխարհի  
հոգևոր անհրաժեշտ պիտոյքները  
լցուցանելուց և իւր աղօթքներով  
մեղաւորների հոգիներ իր փրկու-  
թեան համար աղօթելուց: Եթէ  
սոյն նամակովս մի քանի խօսք  
ասեմ Պապի կամ պապականու-  
թեան մասին՝ ոչ նրա վեհութիւ-  
նը դուրստելու և ոչ էլ նրա ոյժի  
կամ տաղանդի առաջ խոնարհու-  
ելու համար... Թող լրագիրները  
աղիալ-քաղիալն ընկնեն, նորին  
Սրբութեան ամեն մի քայլը, հա-  
զալը, փոնգտալն ու քիթը սըր-  
բելը նկարագրեն ամենայն ման-  
րամասնութեամբ, թող վաղը միւս  
օրն էլ ներկայ Պապի արտասովոր  
հանճարը, նուրբ քաղաքագիտու-  
թիւնն ու բազմաթիւ ունեցած  
ու չունեցած առաքինութիւնները  
փառացի փառս բարձրացնեն,  
որոնց առաջ խոնարհեց, նոյն-  
իսկ, Բիսմարկի նման հաղուագէպ  
քաղաքագէտը, և վերջերս, ա-  
մեն բանի մէջ մեծ երեսնալու տի-  
եզերական արտով բռնուած՝ Վիլ-  
հելմ II, Գերմ. Կայսրը, և այլն  
և այլն: Սակայն Պապը կամ Պա-  
պականութիւնը, էր, է և կը մը-  
նայ մեզ համար և մարդկութեան  
համար մի շարիք, մարդկային  
յառաջադիմութեան և գիտու-  
թեան ոխերիմ թշնամին, մարդ-  
կային ազատ միտքը և հոգին  
դարեր շարունակ կաշկանդող ու  
չահագործող բռնակալ, որպէս և  
ամեն մի միապետ, ժայռով զի ա-  
րիւնը ծծող մակաբոյժներ...:

Քսաններորդ դարն ենք թե-  
ւակոխել, Պապականութեան աշ-  
խարհային իշխանութիւնը վաղուց  
հետէ փշուրել, խորտակել է, պա-  
պը, էպպէս մի քաղաքավարի կա-  
լանաւոր է Վատիկանում, Իտա-  
լական թագաւորի ձեռքին, սա-  
կայն և այնպէս այդ րոպէիս մի-  
լիոնաւոր մարդիկ, խորին եր-  
կիւղածութեամբ ու հապուղէպ  
ջերմ եռանդութեամբ, պատրաստ  
են նրա ոտուրբ հողաթափները  
համբուրելու, գրանով հանդերձ-  
եալ կեանքին արժանանալու, կա-  
մով հոգևոր և մտաւոր ստրուկ  
դառնալու... Մեր նպատակը չէ  
ժողովրդի և մարդկութեան թըշ-  
նամի այս երկրորդ դասակարգի՝  
հոգևորականութեան հասցրած  
անլուր շարիքները և քստմնելի  
վնասները պատմելու, Մեծ Վար-  
դապետի անարժան յաջորդների  
սխրագործութիւնները թուելու...  
Ամեն մէկին քիչ թէ շատ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն Ա Մ Ա Կ Կ Ո Վ Կ Ա Մ Ի Ց

Բագու. 8 Յուլիսի, 1903:  
Երկու երեք տարի էր, ինչ  
դրամական տագնապը (կրիզիս)  
ժանրացած նախարար իւնաբերու-  
թեան վրայ, ահագին վնասներ  
էր հասցընում ազգաբնակչութեա-  
նը ընդհանրապէս և արդիւնա-  
բերող առևտրականներին մասնա-  
ւորապէս: Մասնակցութեան պերի-  
ուրն \*) էր: Բազմաթիւ ֆիրմաներ  
ստիպուած և զան գաղարեցիներ ի-  
րենց գործունէութիւնը: Սակայն  
այժմ նոր համարեա աղաւած այդ  
(սոցիալիզմ), Բագուն կենդանու-  
թեան նշաններ էր ցոյց տալիս՝  
երբ յանկարծ լսելի եղաւ ամբո-  
ւթի հուժկու ձայնը՝ գաղաթեցնել  
աշխատանքներն բոլոր աշխատա-  
նոցներում: Կատարեց այն, ինչ  
կատարելու էր:  
Եւ նա, ամբոյսը արաւ իւր ա-  
սածը:  
Ամսուր 1-ին բանւորները գոր-  
ծադուլ արին գլխաւոր գործա-  
բաններում ու նախահանքերում  
և ապա բազմաթիւ խմբերով ըս-  
կընեցին շրջել բոլոր գործարան-  
ները, նախահանքերը յորդորելու,  
չատ տեղերում, նոյն իսկ, բազկի  
և հաստ փայտի ոյժով ստիպելու

\*) Շրջան  
\*\*) Նրտուիւակ

\*) խրախճանք

